ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ

Տրանսֆորմացվող սփյուռքների առանձնահատկությունները. հայկական սփյուռքի դեպքը

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ
Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն

ԱՐԱՔՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն

Հոդվածը ներկայացնում է ԽՍՀՄ-ի փլուզումից հետո գլոբալացման կտրուկ խորացման պայմաններում նախկին կոմունիստական ճամբարի տարածքից ծագած սփյուռքների էվոլյուցիայում տեղի ունեցող փոփոխությունների ուսումնասիրության մեթոդաբանությունը և դրա կիրառմամբ իրականացված հետազոտության արդյունքները: Որպես օրինակ դիտարկվում է դասական կամ պատմական համարվող հայկական սփյուռքի դեպքը: Ցույց է տրվում, որ սփյուռքի էվոլյուցիայի ընթացքում, եթե փոխվում է սփյուռքի համալրման նախադրյալը, փոխվում են նաև սփյուռքի բնույթն ու հատկանիշները և էական տարբերություններ են առաջանում անգամ նույն սփյուռքը կազմող համայնքների միջև: Այդ դեպքում արդիական է դառնում նաև սփյուռքը կազմող համայնքների համեմատական վերլուծությունը: Հոդվածում առաջարկվում է հայկական սփյուռքի պարբերացման քառափուլ մոդել և ըստ ձևավորման նախադրյալների սփյուռքների դասակարգման կոհենյան մոդելի հինգ տեսակներին ավելացնել վեցերորդը՝ տրանսֆորմացվողը: Դա թույլ կտա ավելի ճշգրիտ նկարագրել գրեթե երեք տասնամյակ սփյուռքներում տեղի ունեցող այն զարգացումները, որոնք հետևանք են հետխորհրդային տրանսֆորմացիայի, ինչպես նաև հին աշխարհակարգի փլուզման ու նորի ձևավորման գործընթացների:

Բանալի բառեր
Տրանսֆորմացվող սփյուռք, հետխորհրդային տրանսֆորմացիա, հայկական սփյուռք, էվոլյուցիայի փուլեր, համայնքներ, պարբերացում

Նախաբան

Վերջին տասնամյակների ընթացքում կոմունիստական ճամբարի փլուզումով պայմանավորված նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացների և խորացող գլոբալացման ազդեցությամբ էապես

մեծացել է այն մարդկանց թիվն, ովքեր ապրում են իրենց հայրենիքից դուրս: Եթե 1960թ. այն 75,5 միլիոն էր, ապա 2009թ. արդեն հասել էր 213,9 միլիոնի[1], իսկ 2015թ.՝ 244 միլիոնի[2]: Այս աճի, ինչպես նաև հաղորդակցության միջոցների շարունակաբար արագացող զարգացումների արդյունքում սփյուռքները կարևոր դերակատարություն են ստացել ազգերի ու պետությունների ճնշող մեծամասնության համար, ինչպես նաև միջազգային հարաբերություններում: Պատկառելի չափերի է հասել սփյուռքների ուսումնասիրությանը նվիրված տեսական և էմպիրիկ հետազոտությունների թիվը, որոնք նվիրված են ինչպես ընդհանուր, տեսական խնդիրներին[3], այնպես էլ առանձին ուղղությունների՝ «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» հարաբերություններ, ինքնության և ինտեգրման դիլեմա, սփյուռքյան ինստիտուտներ, միջազգային հարաբերություններում և հայրենիքի ու ընդունող երկրի ներքին և արտաքին քաղաքականությունների վրա սփյուռքի ազդեցություն և այլն[4]: Այդուհանդերձ, վերոհիշյալ զարգացումները թելադրում են նոր խնդիրներ, առաջ են բերում նոր մարտահրավերներ և պահանջում են նոր լուծումներ:

---

[1] Trends in total migrant stock: The 2005 revision, http: //esa.un.org/migration

[2] International Migration Report 2015. Department of Economic and Social Affairs. United Nations. New York, 2016, p. 4, www.on.org/en/development/desa/population/migration/publications/migrationreport/docs/Migration Report2015.Highlights.pdf

[3] **Dufoix S.,** *Diasporas.* 2008. Berkeley: University of California Press; **Laguerre M. S.,** *Diaspora, Politics, and Globalization.* 2006. New York: Palgrave Macmillan; **Sheffer G.,** *Diaspora Politics: At Home Abroad.* 2003. Cambridge: Cambridge University Press; **Cohen R.,** *Global diasporas.* Second edition. Routledge, 2008; **Brazil J. and Mannur A.,** *Theorizing Diaspora: A Reader.* Oxford: Blackwell. 2003; **Esman M.,** *Diasporas in the Contemporary World.* Cambridge: Polity Press. 2009; **Kokot A. and Tölölyan Kh.,** eds. Diaspora, Identity and Religion, New Directions in Theory and Research. New York: Routledge. 2004.

[4] **Sheffer G.,** Integration impacts on Diaspora-homeland relations, *Diaspora Studies*, 2013, **6,** 1, 13-30; **Ter-Matevosyan, V. et al.,** Institutions and Identity politics in the Armenian diaspora: the cases of Russia and Lebanon, *Diaspora Studies,* 2017, **10**, 1, 64-80; **Shain Y., and Barth A.,** Diasporas and International Relations Theory, *International Organization*, 2003, 57, 449-479; **Shain Y.,** *Kinship and Diasporas in International Affairs.* University of Michigan Press, Ann Arbor; **Burla Sh.,** The Diaspora and the homeland: political goals in the construction of Israeli narratives to the Diaspora, *Israel Affairs*, 2015, **21**, 4, 602-619.

Հետխորհրդային տրանսֆորմացիայի սկզբնական շրջանում անգամ հանրահայտ ուսումնասիրողների (մասնավորապես Ս. Հանթինգթոնին[5]) թվում էր, որ նախկին կոմունիստական ճամբարի երկրներում արագորեն կհաստատվեն ժողովրդավարական վարչակարգեր և այդ երկրները կբռնեն բնականոն զարգացման ուղին: Մինչդեռ, մի քանի տարի անց պարզ դարձավ, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի հարացույցը շատ ավելի բարդ է, քան ենթադրվում էր:[6] Հիմնական բարդությունն այն էր, որ այդ գործընթացն աննախադեպ էր մարդկության պատմության համար: Մի քանի տասնյակ երկրներ հայտնվել էին համակարգային ճգնաժամում. մինչ այդ գործող քաղաքական, տնտեսական, սոցիալական և մյուս բոլոր համակարգերը փլուզվել էին և կիրառելի չէին նոր պայմաններում, իսկ նոր համակարգերի կառուցման համար չկար ոչ գիտելիք, ոչ փորձ:[7] Սոցիալիստական ճամբարում համարվում էր, որ միակ ճշմարիտ գաղափարախոսությունը կոմունիստականն է և հասարակական կյանքի բոլոր ոլորտները պետք է կառավարվեն դրա հիման վրա: Այլ գաղափարները, տեսություններն ու սկզբունքները համարվում էին թշնամական և դրանց ուսումնասիրումը հետապնդվում էր: Սակայն դա խնդրի միայն մեկ կողմն էր: Կոմունիստական ճամբարի փլուզումով փլուզվել էր նաև երկբևեռ աշխարհակարգը, որի բևեռներից մեկը կոմունիստական աշխարհն էր: Երբ պարզ դարձավ, որ միաբևեռ աշխարհակարգի ձևավորումն անհնար է[8], 2000-ականներից նոր աշխարհակարգի ձևավորման աշխարհաքաղա-

---

[5] **Huntington S.,** *The Third Wave: Democratization in the Late Twentieth Century.* Norman. 1991.

[6] **Carothers T.,** The End of the Transition Paradigm, *Journal of Democracy*, 2002, **13**, 1, 6-21.

[7] **Թորոսյան Տ.,** *Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա*, Երևան, «Գիտություն» հրատ., 2006 թ., էջ 9:

[8] **Haass R.** The Age of Nonpolarity. What Will Follow U.S. Dominance, *Foreign Affairs,* May/June, 2008, http://www.foreignaffairs.org/20080501 faessay87304; **Kagan R.,** The Return of History. *The Los Ageles Times.* August 5, 2007, http://www.carnegieendowment.org/publications; **Waltz K.,** *The Anarchic Structure of World Politics. International Politics: Enduring Concepts and Contemporary Issues.* N.Y. 2005; **Mastaduno M.,** Realist View: Three Images of the Coming International Order.-International Order and the Future of World Politics. (Ed. by T Paul and J. Hall). Cambridge. 2001.

քական մրցակցությունը թևակոխեց ավելի կոշտ դիմակայության շրջան:[9] Քանի որ հիմնական պայքարն ընթանում էր նախկին կոմունիստական ճամբարի տարածքում ազդեցության համար, ապա ակնհայտ է, որ այդ պայքարի ողջ ծանրությունն առաջին հերթին իրենց վրա զգում էին այդ տարածքի պետությունները: Ձևավորված չափազանց բարդ կենսապայմանների, հակամարտությունների, քաղաքացիական պատերազմների արդյունքում իրենց հայրենի երկրները լքում էին և մինչ օրս լքում են միլիոնավոր մարդիկ: Ավելին, ԽՍՀՄ փլուզումից հետո այդ երկրների ժողովուրդների զգալի զանգվածներ, առանց որևէ տեղաշարժի, ստացան միանգամայն նոր կարգավիճակ: Եթե մինչ ԽՍՀՄ փլուզումը հայերը, վրացիները, ուկրաինացիները, ռուսները և ԽՍՀՄ հանրապետությունների մյուս տիտղոսակիր ժողովուրդներն ամբողջ երկրի տարածքում ունեին նույն՝ ԽՍՀՄ քաղաքացու կարգավիճակն, ապա փլուզումից հետո Ռուսաստանում ապրող ոչ ռուս ժողովուրդների բոլոր ներկայացուցիչները դարձան սփյուռքների ներկայացուցիչներ: Նույն բանը տեղի ունեցավ նաև մյուս հանրապետությունների դեպքում՝ ոչ տիտղոսակիր ժողովուրդների համար: Ընդ որում, որոշ դեպքերում այդ փոփոխությունները հանգեցնում էին ոչ միայն քանակական, այլև որակական փոփոխությունների: Մասնավորապես, հայերի դեպքում, եթե մինչ ԽՍՀՄ փլուզումը հայկական սփյուռքի ամենաստվար համայնքը Միացյալ Նահանգներինն էր և հայկական սփյուռքի ճնշող մեծամասնությունը տեղաբաշխված էր Մերձավոր Արևելքում և Արևմուտքում, ապա փլուզումից հետո ստացվեց, որ ամենաստվար համայնքը Ռուսաստանի հայկական համայնքն է և զգալիորեն փոխվել է տարածաշրջանային բաշխվածությունը: Ավելին, էապես փոխվում էին նաև սփյուռքի մի շարք ազդեցիկ համայնքների կառուցվածքներն՝ ըստ սփյուռքի ձևավորման նախադրյալների, տարբեր համայնքների ազդեցիկությունը, համայնքների ներսում արտագաղթի տարբեր նախադրյալների ազդեցությամբ ձևավորված խմբերի միջև հարաբերությունները և այլն: Ընդ որում, այդ փոփոխությունները հատուկ են ոչ միայն հայկական, այլև մի շարք այլ սփյուռքների՝ ուկրաինական,

[9] **Torosyan T., Vardanyan A.,** The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, 2015, *Geopolitics*, **20,** 3, 559-582.

վրացական, լեհական և այլն: Ավելին, այդ գործընթացներն ազդում են ոչ միայն նախկին կոմունիստական ճամբարի երկրների վրա, այլև անգամ Միացյալ Նահանգների, քանի որ այդ երկրում են գտնվում ուկրաինական, լեհական, հայկական և այլ սփյուռքների ստվար համայնքներ: Նման ընդգրկում ունեցող և արդեն գրեթե երեք տասնամյակ շարունակվող այդ գործընթացները լուրջ տրանսֆորմացիաներ են առաջ բերում ինչպես այդ հասարակություններում, այնպես էլ դրանց սփյուռքներում, քանի որ շարունակվում են քառորդ դարից ավելի, և արժանի են հատուկ ուսումնասիրության:

Մասնավորապես, այս հոդվածում դիտարկվում է սփյուռքների բնույթի, հետևաբար և գործունեության տրանսֆորմացիայի երևույթը: Որպես օրինակ դիտարկվում է դասական կամ պատմական համարվող սփյուռքներից մեկի՝ հայկական սփյուռքի դեպքը: Ցույց է տրվում, որ սփյուռքների կիրառվող դասակարգումներում կարիք կա լրացումների՝ ավելի լիարժեք բնութագրելու համար սփյուռքների գործունեությունը, մասնավորապես, դիտարկելու տրանսֆորմացվող սփյուռքների դեպքը, քանի որ մի շարք ժամանակակից գործընթացների՝ հատկապես գլոբալացման, նոր աշխարհակարգի ձևավորման և հետխորհրդային տրանսֆորմացիայի, ազդեցությամբ հասարակական կյանքում տեղի ունեցող զարգացումները ստացել են ոչ միայն աննախադեպ արագություն, այլև հանգեցրել են որակական փոփոխությունների: Ընդ որում, այդ երևույթը կարող է անդրադառնալ հատկապես դասական կամ պատմական համարվող սփյուռքների զարգացումների վրա: Առաջարկվում է ձևավորման նախադրյալների հիման վրա սփյուռքների դասակարգման կոհենյան մոդելը լրացնել ևս մեկ՝ տրանսֆորմացվող, տեսակով, ինչը հնարավորություն կտա ավելի ճշգրիտ բնութագրել սփյուռքներում տեղի ունեցող փոփոխությունները:

Երկրորդ կարևոր խնդիրը, որի լուծումը հնարավորություն է տալիս այս հոդվածով ներդրում ունենալ սփյուռքների գիտական ուսումնասիրության մեջ, վերաբերում է հայկական սփյուռքի էվոլյուցիայի պարբերացմանը: Դա կօգնի հայկական սփյուռքին վերաբերող հետազոտությունների կոնցեպտուալացմանը՝ նպաստելով արդյունքների հավաստիության մեծացմանն ու ճշգրտության ապահովմանը:

Հայկական սփյուռքի էվոլյուցիան

Հայկական սփյուռքի պատմությունն՝ ըստ իրադարձություն-ների զարգացման տրամաբանության, կարելի է բաժանել չորս հիմնական փուլերի[10]: Դրանց տևողությունները միմյանցից զգալիորեն տարբեր են, սակայն յուրաքանչյուրի սկիզբը պայմանավորված է հայկական սփյուռքի ձևավորման կամ գործունեության մեջ որակա-կան փոփոխությունների դրսևորմամբ: Հատուկ ուշադրության է արժանի վերջին, ամենակարճ փուլը, որի արդյունքում հայկական սփյուռքում տեղի են ունենում որակական փոփոխություններ:

Ձևավորման նախնական փուլը: Հայկական սփյուռքի ձևավորումն՝ ըստ գրավոր հիշատակումների, սկիզբ է առել դեռևս 3-4-րդ դարերում, Սասանյան արքաների օրոք իրականացվող տեղահա-նումներով: Այնուհետև հայերի տեղաշարժերն առավել զանգվածային բնույթ են ստացել Բյուզանդական կայսրության տիրապետության շրջանում, երբ Հայաստանի զգալի մասը գրավվեց և ներառվեց այդ կայսրության սահմանների մեջ: Բյուզանդիայի վարած հետևողական քաղաքականության արդյունքում հայերը ստիպողաբար տեղահանվել են դեպի կայսրության առավել քիչ բնակեցված շրջաններ՝[11] ձևավորելով հայկական սփյուռքի առաջին օջախները: Դա իրակա-նացվել է անգամ այն ժամանակ, երբ գահ էին բարձրանում Մակեդոնիայի հայկական ծագմամբ արքաները:

1033-1071 թվականներին՝ սելջուկ թուրքերի արշավանքների ժամանակ, երբ նրանք գրավեցին Հայաստանի մեծ մասը, տեղահան-ված հայերի զգալի հոսքեր ուղղվում էին դեպի Կիլիկիա,[12] որտեղ բարդ ռազմաքաղաքական պայմաններում հաջողվեց ստեղծել Կիլիկիայի հայկական թագավորությունը: Այն դարձավ ոչ միայն հայկական

---

[10] **Թորոսյան Տ., Սարադյան Մ.,** Հայկական սփյուռքի հնարավորություն-ները և ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա, Երևան, Հեռանկարային ուսումնա-սիրությունների և նախաձեռնությունների կենտրոն, 2017թ., էջ 165-170:

[11] **Ember M., Carol R., Skoggard I.,** *Encyclopedia of Diasporas: Immigrant and Refugee Cultures around the World. S*pringer. 2004, pp. 36–43.

[12] **Tölölyan Kh.,** Armenian Diaspora, *Encyclopedia of Diasporas*, Springer US, 2005, pp. 35-46.

պետականության նոր մարմնավորում, այլև հայկական մշակույթի զարգացման նոր կենտրոն՝ խթանելով ազգային ինքնության պահպանումը նաև հայկական սփյուռքի մի շարք գաղթօջախներում, որոնց հետ հաստատվեցին ամուր կապեր: Անգամ Կիլիկիա տեղափոխվեց Հայաստանյայց առաքելական եկեղեցու կաթողիկոսությունը: Թեև տևական ժամանակահատված Կիլիկիայի թագավորները կարողանում էին հաջողությամբ լուծել բարդ խնդիրները, որոնք ձևավորվել էին տարածաշրջանում մի շարք կողմերի (խաչակիրներ, մամլուքներ, մոնղոլներ և այլն) շահերի բախման արդյունքում, այդուհանդերձ, 1375 թվականին՝ մամլուքների արշավանքների արդյունքում, թագավորությունն անկում ունեցավ և տեղի հայերի զգալի մասը տեղափոխվեց Իտալիա, Ֆրանսիա, Բալկաններ, Սիրիա, Կիպրոս՝ կազմելով նոր համայնքներ: Մինչև 14-րդ դարը հայերը համայնքներ էին ստեղծել նաև Կիևյան Ռուսիայում, Ասորիքում, Միջագետքում, Ղրիմում, Փոքր Ասիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Բուլղարիայում:

Երկրորդ փուլը. Օսմանյան կայսրության բռնաճնշումներ և ցեղասպանություն: Հայկական սփյուռքի ձևավորման հարցում շրջադարձային էր Օսմանյան կայսրության հիմնումը: Կայսրությունը որդեգրեց քրիստոնյա ժողովուրդների տեղահանումների ու բռնաճընշումների և բռնի թուրքացման քաղաքականություն՝ պետության ամբողջ տարածքում: Դրա հետևանքով հայերն արտագաղթում էին ոչ միայն Հայաստանից, այլ նաև կայսրությանը բռնակցված այլ տարածքներից: Օսմանյան կայսրության տիրապետության ներքո հայերի արտագաղթի նոր խոշոր ալիք բարձրացավ, երբ թուրքերը գրավեցին Ղրիմը և մինչ այդ այնտեղ հաստատված հայերի ստվար զանգված լքեց թերակղզին՝ հաստատվելով Ռուսաստանում, Լեհաստանում և այլուր: Հաջորդ խոշոր ալիքը ձևավորվեց Օսմանյան կայսրության և Պարսկաստանի միջև սկսված պատերազմների հետևանքով, ինչի արդյունքում Կասրե Շիրինի պայմանագրով 1639 թվականին Հայաստանը բաժանվեց այդ պետությունների միջև[13]: Նշանակալի էին հատկապես 1604-1605 թվականներին Պարսկաստանի Շահ Աբաս արքայի կազմակերպած բռնագաղթերը, ինչի

[13] **Boumoutian G.,** A Concise History of The Armenian People, Mazda Publishers, Inc. Costa Mesa California, 2006, p. 188.

արդյունքում շուրջ 300 հազար հայեր գաղթեցին Պարսկաստան՝ զարգացնելու այդ երկրի առևտրային և տնտեսական ոլորտները[14]:

Օսմանյան տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում նոր դրսևորումներ էին ստանում հայերի նկատմամբ իրականացվող զանգվածային բռնաճնշումները: 1894-1896 թվականներին Աբդուլ Համիդ II-ի՝ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերում զանգվածային կոտորածների արդյունքում հարյուր հազարավոր հայեր սպանվեցին, մահմեդականացվեցին կամ վտարվեցին իրենց բնակության վայրերից: Այս շրջանում հայերն արտագաղթում էին հատկապես ԱՄՆ, Կանադա և Հարավային Ամերիկայի երկրներ: Այդ ժամանակաշրջանում հայկական սփյուռքն ուներ երկու հիմնական բնութագրիչ.

1. Թեև արտագաղթը շարունակական բնույթ ուներ, այնուամենայնիվ հայ ազգի ճնշող մեծամասնությունը շարունակում էր բնակվել իր հայրենիքում՝ Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Կիլիկիայում, Արևմտյան Հայաստանում և Ռուսական կայսրության տիրապետության ներքո գտնվող Արևելյան Հայաստանում:
2. Արտագաղթած հայերը և նրանց սերունդները գրեթե միշտ հնարավորություն են ունեցել վերադառնալու հայրենիք:[15]

Իրավիճակը գագաթնակետին հասավ 1915 թվականին, երբ Օսմանյան կայսրությունն, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմով պայմանավորված «բարենպաստ» իրավիճակից, նախաձեռնեց հայերի ցեղասպանությունը, որն աննախադեպ էր իր մասշտաբներով և հետևանքներով: Արևմտյան Հայաստանը ամայացվեց: Եղեռնի զոհ դարձան մոտ 1,75 միլիոն հայեր, իսկ փրկվածները ապաստան գտան Արևելյան Հայաստանում կամ տարբեր երկրներում հաստատված հայ համայնքներում:[16] Վերոհիշյալ երկրորդ բնութագրիչը վերացավ, քանի որ ցեղասպանությանը հաջորդած շրջանում

---

[14] **Дятлов В., Мелконян Э.,** Армянская диаспора: очерки социокультурной типологии. Ереван, Институт Кавказа, 2009, с. 44.

[15] **Дятлов В., Мелконян Э.,** նշվ. աշխ., էջ 40.

[16] **Cohen R.,** Diasporas and the nation-state: from victims to challengers, *International Affairs*, 1996, 72 (3), 507-520.

Արևմտյան Հայաստանից դուրս մղված հայերն այլևս կորցրեցին հայրենիք վերադառնալու իրատեսական հնարավորությունները:

Երրորդ փուլ. հայրենադարձություն և ներքին տեղաշարժեր: Ցեղասպանության հետևանքով հարյուր հազարավոր հայեր տեղափոխվեցին օտար երկրներ: 1918 թվականին Հայաստանի անկախության վերականգնմանն ու ընդամենը երկուսուկես տարի անց նոր կորստին հաջորդած իրադարձությունները էապես փոխեցին հայության պատկերացումները շատ երևույթների վերաբերյալ: Հատկանշական է, որ հենց այդ շրջանում կիրառության մեջ մտավ «սփյուռք» եզրույթը, որը փոխարինեց նախկինում հայրենիքից դուրս գտնվող հայկական համայնքները բնորոշող «գաղթօջախ»-ին: Փոխվեցին նաև սփյուռքի վերաբերյալ պատկերացումները՝ հայ ժողովրդի համար պատմական շրջադարձային իրողություններով պայմանավորված նոր գիտակցությամբ և ընկալմամբ[17]: Խորհրդային Միության կազմում ձևավորված Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը (ՀՍՍՀ)՝ Մոսկվայի արտոնմամբ և Հայաստանի ժողովրդագրական վտանգավոր իրավիճակի շտկման նպատակով երեք փուլերով՝ 1921-1936թթ., 1946-1948թթ., 1960-1982թթ., իրականացրեց հայրենադարձություն:[18] Առաջին փուլում Հայաստան ներգաղթեցին ավելի քան 45 հազար հայեր Ֆրանսիայից, Բուլղարիայից, Հունաստանից, Սիրիայից, Թուրքիայից, Իրաքից: Երկրորդ փուլում ներգաղթեց մոտ 100 հազար հայ: Հետագայում ԽՍՀՄ-ում քաղաքական հետապընդումների. ամբողջատիրական բարքերի պատճառով ներգաղթի տեմպերը զգալիորեն թուլացան: 1960 թվականին վերսկսված ներգաղթի երկու տասնամյակների ընթացքում 30 երկրներից Հայաստան վերադարձան միայն 35 հազար հայեր: Թեև այդ քաղաքականության արդյունքում բարելավվեց ժողովրդագրական իրավիճակն, այդուհանդերձ ծանր սոցիալական պայմանները հիասթափություն

---

[17] **Дятлов В., Мелконян Э.,** նշվ. աշխ., էջ 43.

[18] **Սարգսյան Հ.,** 1946-1948 թթ Հայրենադարձության աշխարհագրությունը և Ժողովրդագրությունը: *1946-1948թթ. Հայրենադարձությունը եւ դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր գիտաժողովի զեկուցումների ժողովածու,* 2008թ., էջ 48-59:

առաջացրին ներգաղթյալների շրջանում, ինչի արդյունքում արդեն 1947 թվականին մեծացան ԽՍՀՄ-ից վերադառնալու փորձերը[19]:

Հարկ է նշել, սակայն, որ սփյուռքի ներգրավվածությունը Հայաստանի տնտեսական, մշակութային, հասարակական կյանքին սահմանափակվում էր գրեթե միայն հայկական սփյուռքի ընդունող երկրներում տպագրվող լրագրային հոդվածերով ու տարատեսակ ելույթներով՝ չդառնալով լուրջ, գիտական ուսումնասիրությունների առարկա[20], ինչը կարող էր օգնել առկա բացթողումների բացահայտմանը և թերությունների շտկմանն ու առկա խնդիրների լուծմանը: Այդ իրավիճակը կարող էր կապված լինել այն հանգամանքի հետ, որ սփյուռքի գիտական գործունեությամբ զբաղվող հատվածը գիտակցում էր հայրենադարձության հետագա դժվարությունների լրջությունը և իրատեսական չէր համարում Խորհրդային Միության խոստացած բարեկեցիկ պայմանների ապահովումը: Ոչ պակաս կարևոր է այն հանգամանքը, որ Խորհրդային Միությունը որպես թշնամական վերաբերմունք էր ընդունում ցանկացած քննադատություն: Կոմունիստական վարչակարգը հռչակվել էր հասարակության զարգացման միակ ճիշտ ու անթերի ուղին և խստորեն պատժվում էր ցանկացած այլախոհություն: Ակնհայտ է, որ թշնամական համարվող կապիտալիստական աշխարհից ցանկացած այլ կարծիք համարվելու էր դիվերսիա: Հայրենիքում իրավիճակի վերաբերյալ զգուշավոր վերաբերմունք թելադրող երրորդ գործոնն այն էր, որ հալածանքների ու բռնաճնշումների էին ենթարկվում նաև հայրենադարձները և օտար երկրում ներկայացված քննադատությունն անգամ կարող էր հայրենիքում լուրջ հարվածի տակ դնել քննադատողների ծանոթներին ու հարազատներին:

Հատկանշական է, որ հայրենադարձության հոսքն ամենաստվարն է եղել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ

---

[19] **Վիրաբյան Ա.,** Մեծ Հայրենադարձության հիմնահարցեր և խնդիրներ: *1946-1948թթ. Հայրենադարձությունը եւ դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր գիտաժողովի զեկուցումների ժողովածու*, 2008թ., էջ 8-21:

[20] **Մելիքսեթյան Հ. Ու.,** Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը: Երևան, 1985թ.; Հովհաննիսյան Պ., Հայրենադարձության պատմության պատմագրությունը, *1946-1948թթ. Հայրենադարձությունը եւ դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր գիտաժողովի զեկուցումների ժողովածու*, 2008 թ., էջ 22-47:

ԽՍՀՄ ղեկավարությունը, հայությանը հատուցելու անհրաժեշտությունը շեշտելով, հիմնավորում էր Թուրքիայի նկատմամբ իր տարածքային պահանջները, որոնք վերաբերում էին Արևմտյան Հայաստանին: Հայրենադարձությանը նպաստում էր նաև Երկրորդ աշխարհամարտից հետո ԽՍՀՄ-ի հաղթանակած դիրքը, որը սփյուռքի կողմից ընկալվում էր որպես հզորության և բարգավաճման երաշխիք: Հայերը հայրենադարձման արդյունքում լիահույս էին վերադառնալ իրենց բնօրրանները և, միաժամանակ, Խորհրդային Միության կազմում տեսնել բարգավաճ հայրենիք: Սակայն նրանց երկու սպասելիքներն էլ չարդարացան: Այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ հայրենադարձությունը ոչ միայն նպաստեց Հայաստանում ժողովրդագրական խնդրի լուծմանն, այլև ակնառու հետք թողեց բոլոր բնագավառներում՝ կրթությունից ու գիտությունից մինչև կենցաղ:

Հայրենադրաձությունից զատ, այս փուլն առանձնանում է ևս մեկ դրսևորումով: Խորհրդային տարիներին ձևավորվեցին և աստիճանաբար ստվարացան Հայաստանից դուրս եկող երկու հոսքեր: Դրանցից մեկը կազմում էին մտավորականներ՝ գիտնականներ, մշակույթի գործիչներ, բժիշկներ, ինժեներներ և այլն: Նրանք Հայաստանից տեղափոխվում էին Մոսկվա, Լենինգրադ (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) և մի քանի այլ ռուսական խոշոր քաղաքներ, որտեղ շատ ավելի բարենպաստ պայմաններ ու հեռանկարներ կային առաջխաղացման, մեծ ծրագրերի իրագործմանը մասնակցելու և ավելի մեծ հաջողության հասնելու համար: Երկրորդ խումբը կազմում էին արհեստավորներ, ովքեր Ռուսաստան էին մեկնում սեզոնային աշխատանքի, ինչը թույլ էր տալիս ամառվա մի քանի ամիսների ընթացքում վաստակել շատ ավելի մեծ գումարներ, քան Հայաստանում կարող էին վաստակել մեկ տարվա ընթացքում: Առաջին խմբի մեջ մտնող մարդիկ շատ հաճախ, իսկ երկրորդ խմբի մեջ մտնողները՝ որոշ դեպքերում, չէին վերադառնում Հայաստան: Այս երկու երևույթները հնարավոր չէ դիտարկել ուղղակիորեն սփյուռքի ձևավորման ենթատեքստում, քանի որ այդպիսին չի կարելի համարել նույն պետության ներսում մարդկանց տեղաշարժերի անգամ զգալի հոսքերը: Սակայն, ԽՍՀՄ փլուզումից հետո այդ մարդիկ անմիջապես ինքնաբերաբար հայտնվեցին սփյուռքի կարգավիճակում, ավանդա-

կան սփյուռքից տարբերվող միանգամայն այլ հատկանիշներով՝ ըստ հայրենիքից հեռանալու դրդապատճառի, ընդունող երկրի առանձնահատկությունների (վարչակարգ, մշակույթ և այլն), հայ համայնքի մտածողության, աշխարհընկալման և այլն: Խորհրդային մտածողության ու աշխարհընկալման կաղապարները[21] չէին կարող ԽՍՀՄ-ի հետ անմիջապես վերանալ և մի քանի տասնամյակ է պետք այդ ամենը հաղթահարելու համար, քանի որ հասարակական գիտակցության տրանսֆորմացիան հասարակական համակարգի տրանսֆորմացիայի ամենաբարդ և տևական ջանքեր պահանջող բաղադրիչն է[22]: Իհարկե, այդ մարդիկ նույնպես նշում էին ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, քայլեր էին ձեռնարկում ազգային ինքնության պահպանման համար և այլն, սակայն ակնհայտ է, որ, ի տարբերություն այլ երկրներում ձևավորված համայնքների, Ռուսաստանում ձևավորվող հայկական համայնքի բնույթը, փաստորեն, համապատասխանում էր ոչ թե զոհի կարգավիճակին, այլ աշխատանքային սփյուռքին՝ խորհրդային մտածողության համադրմամբ: Այս համայնքն ավելի կարևոր դերակատարություն ստացավ ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ դարձավ հայկական սփյուռքի մաս, իսկ աշխատանքային նախադրյալով պայմանավորված արտագաղթն այնպիսի չափեր ու ազդեցություն ստացավ, որ կարելի է խոսել հայկական սփյուռքի էվոլյուցիայի նոր՝ տրանսֆորմացման փուլի մասին:

Չորրորդ փուլ. հայկական սփյուռքի տրանսֆորմացման շրջանը: Կոմունիստական վարչակարգ ունեցող Խորհրդային Միության փլուզումը երկակի ազդեցություն ունեցավ ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում, որի հետանքով էապես փոխվեցին հայրենիք-սփյուռք հարաբերությունները: Այդ փոփոխությունները պայմանավորված էին երկու հիմնական հանգամանքներով: Դրանցից առաջինը մարդկության ողջ պատմության ընթացքում նախադեպ չունեցած՝ կոմունիստական վարչակարգից բնականոն զարգացման անցնելու անհրաժեշտությունն էր: Փլուզումը հանգեցրեց համակարգային ճգնաժամի, քանի որ նախորդ 70 տարիների ընթացքում գործած

[21] **Cavoukian K.,** ‘Soviet Mentality?’ The Role of Shared Political Culture in Relations between the Armenian State and Russia’s Armenian Diaspora. *Nationalities Papers,* 2013, 41 (5), 709–729.

[22] **Թորոսյան Տ.,** նշվ. աշխ., էջ 179-180:

քաղաքական, տնտեսական, սոցիալական և մյուս համակարգերը նոր իրավիճակում դարձան ոչ պիտանի, իսկ կարճ ժամանակում նոր համակարգեր ձևավորելու համար չկային ոչ անհրաժեշտ միջոցներ ու գիտելիքներ, ոչ փորձ։[23] Իրավիճակն ավելի էին բարդացնում 1988թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով առաջացած ծանր սոցիալ-տնտեսական պայմանները երկրի տարածքի զգալի հատվածում և Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի իրացմանն ի պատասխան Ադրբեջանի իրականացրած բռնությունների, էթնիկ զտումների, ջարդերի ալիքն ու սանձազերծած պատերազմը[24]։ Տնտեսական, քաղաքական, սոցիալական համակարգերի փլուզման և հասարակական բոլոր ենթակառուցվածքների անգործության արդյունքում ստեղծված կենսապայմանները չափազանց ծանր էին։ Իրավիճակն էլ ավելի բարդացավ այն բանից հետո, երբ Թուրքիան միացավ Ադրբեջանի կողմից կազմակերպված Հայաստանի շրջափակմանը։[25]

Երկրորդ հանգամանքը, որով պայմանավորված էին Հայրենիք-սփյուռք հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունները, ԽՍՀՄ փլուզումից հետո սկսված զանգվածային արտագաղթն էր, որի հետևանքով նաև սփյուռքում տեղի ունեցան արմատական տեղաշարժեր։ Այն հետխորհրդային շրջանում մեծ ծավալներ ստացավ՝ հասնելով գրեթե 2 միլիոնի, որի երկու մեծ հատվածներից մեկի գլխավոր հանգրվանն էր Ռուսաստանը, մյուսինը՝ Միացյալ Նահանգները։ Աղճատվում էին պատկերացումները հայրենիք-սփյուռք հարաբերությունների մասին։ Հայրենիքում ձևավորված բարդ կենսապայմանների հետևանքով այդ հարաբերությունների հիմքն այլևս ընկալվում էր սփյուռքից եկող նյութական օժանդակությունը։ Իհարկե, այն ինչ որ չափով մեղմում էր հազարավոր մարդկանց տառապանքները, սակայն ավելի ու ավելի էր հետին պլան մղվում սփյուռքից հիմնական ակնկալիքը։ Հայրենիքն առաջին հերթին

---

[23] **Թորոսյան Տ.,** նույն տեղում, էջ 17։

[24] **Cox C., Eibner J.,** Ethnic Cleansing in Progress: War in Nagorno-Karabakh, Zurich, London and Washington, 1993; **Starovoitova G.,** Sovereignty after Empire. Self-Determination Movements in the Former Soviet Union. Institute of Peace (USA), 1996, www.usip.org/pubs/peaceworks/pwks19/chap3_19.html

[25] **Görgülü A.,** 'Turkey-Armenia Relations: A Vicious Circle', TESEV Publications, Foreign Policy Analysis Series 8 (2008 Nov.).

կարիք ուներ երկրի առջև ծառացած բարդ մարտահրավերների հաղթահարման համար անհրաժեշտ գիտելիքներ ու փորձ ունեցող մասնագետների, ինչպես նաև դրանց պատրաստման առաքելություն ունեցող կրթության ու գիտության ոլորտների արմատական բարեփոխումների։

Իհարկե, Ադրբեջանի սանձնազերծած պատերազմի պայմաններում պաշտպանության ու անվտանգության խնդիրներն 1990-ականներին առաջնային նշանակություն ունեին։ Հաճախ դրանով էին բացատրվում պետականության կայացման հետ կապված լուրջ խնդիրների լուծման համար բացառիկ կարևորություն ունեցող՝ սփյուռքյան ներուժի օգտագործման նպատակով արդյունավետ մեխանիզմների մշակման և կիրառման հարցում սխալներն ու բացթողումները։ Սակայն հարաբերությունների նման որակը չփոխվեց նաև հետագայում, քանի որ սփյուռքը շարունակվեց ընկալվել միայն նյութական, ֆինանսական միջոցների աղբյուր և ներդրումների ներգրավման հնարավորություն։ Սփյուռքում էլ հայրենիքի վերաբերյալ գերիշխում էին առասպելականացված պատկերացումները։ Չստեղծվեցին ինստիտուցիոնալացված գաղափարական և նորմատիվային մեխանիզմներ, որոնց վրա կարող էին կառուցվել հայրենիք-սփյուռք հարաբերությունները։ Ազգային գործուն գաղափարախոսության բացակայությունը հայրենիք-սփյուռք հարաբերությունները տարավ հակառակ ուղղությամբ։ Պետականության կայացման դժվարին փուլում արևմտյան երկրներում հայերի կուտակած քաղաքական և հասարակական ոլորտների կազմակերպման փորձն ու գիտելիքները որևէ կերպ չօժանդակեցին պետության կայացմանը։ Մինչդեռ այն հետխորհրդային տրասֆորմացիայի մարտահրավերների հաղթահարման բացառիկ ներուժ ուներ[26]։ Պետականակերտման ճանապարհին սփյուռքի ներգրավվածությունը կարող էր կարևոր ազդակ դառնալ ու երկրի ընթացքը տանել ցանկալի ուղղությամբ, սակայն դրա համար անհրաժեշտ լուծումներ չգտնվեցին ոչ սփյուռքի մտավորական շրջանակներում, ոչ Հայաստանի քաղաքական ընտրախավում։ 1999 թվականից պարբերաբար հրավիրվող Հայաստան-Սփյուռք համաժողովները, 2005թ. իրականացված սահմա-

[26] **Թորոսյան Տ.,** նշվ. աշխ., էջ 20։

նադրական փոփոխությունները, որոնց արդյունքում թույլատրվեց երկքաղաքացիություն, ինչպես նաև 2008թ. Սփյուռքի նախարարության ստեղծումը, թեև որոշ աշխուժություն մտցրեցին հայրենիք-սփյուռք հարաբերություններում, սակայն դրանք լիարժեք բովանդակություն չստացան ու հիմնախնդիրների համար լուծումներ այդպես էլ չգտնվեցին, քանի որ չէր ընկալվում կատարվող իրադարձությունների որոշիչ ազդեցությունը և, որ էական տրանսֆորմացիա է տեղի ունենում ոչ միայն հայրենիքում, այլև սփյուռքում: Շատ հաճախ հարցերի ու մարտահրավերների քննարկումը մնում է հուզական հարթությունում: Անգամ փորձ չի արվել լրջորեն ուսումնասիրելու, թե ինչ արդյունքներ ունեցավ Հայաստանի Հանրապետության պետական կառույցների ձևավորման ու կայացման գործում սփյուռքի ամենալայն ներգրավման փորձը: Քանի որ խորհրդային Հայաստանը միջազգային հարաբերությունների իրական փորձ չուներ ու համապատասխան մասնագետներ էլ չէին պատրաստվում հայաստանյան համալսարաններում, այդ ոլորտը վստահվեց մի խումբ երիտասարդ սփյուռքահայերի: Հայաստանի Հանրապետության առաջին արտգործնախարար, ՀՀ առաջին նախագահի արտաքին հարաբերությունների և անվտանգության հարցերի գծով գլխավոր խորհրդական, արտաքին գործերի նախարարության մի խումբ կառույցների ղեկավարներ նշանակվեցին սփյուռքահայեր: Հետագայում նրանցից մեկը 10 տարի գլխավորում էր Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը երկրի հաջորդ նախագահի պաշտոնավարման ընթացքում: Իհարկե, պետք է արձանագրել, որ այդ մարդկանց փորձը արտաքին հարաբերությունների ոլորտում վերաբերում էր ոչ թե միջպետական հարաբերություններին, այլ հայոց ցեղասպանության ճանաչմանն առնչվող լոբբիստական աջակցության ոլորտին: Միաժամանակ, հայաստանյան խնդիրները չափազանց բարդ են և հետևանք են նաև եզակի քաղաքական երևույթի՝ հետխորհրդային տրանսֆորմացիայի:

Պետք է ենթադրել, որ սփյուռքից ակնկալվող աջակցությունը պետության կառուցմանն ու կայացմանն առաջին հերթին սպասվում էր և սպասվում է Արևմուտքում հաստատված հայկական սփյուռքի համայնքներից, քանի որ ժողովրդավարացման գործընթացն արևմըտ-

յան երևույթ է[27]: Սակայն պարզ լուծումները՝ սփյուռքից անգամ լավագույն մասնագետների մեխանիկական ներգրավումը հայաստանյան գործընթացներին, արդյունավետ չեն լինի: Այդ առումով հատկանշական է ամերիկահայ տնտեսագետ Դ. Աճեմօղլուի պատասխանը Հայաստանի տնտեսության առողջացմանը մասնակցելու առաջարկին, որը նրան ուղղվել էր այն բանից հետո, երբ 2018թ. ապրիլին Հայաստանում տեղի ունեցավ թավշյա հեղափոխություն և իշխանության եկավ խորհրդարանական ընդդիմությունը.

> Կարծում եմ, թարմ հայացքը Հայաստանի գործընթացների վրա կարող է օգտակար լինել, սակայն հենց Հայաստանի քաղաքացիները պետք է լինեն գործընթացի եւ գործողությունների կենտրոնում: Այնպես որ, ես իրոք հույս ունեմ, որ իմ օգնությունը օգտակար կլինի, սակայն ես նաեւ չեմ ակնկալում ավելի մեծ դեր ունենալ: Եվ այդ կարծիքս վերաբերում է ընդհանրապես Սփյուռքի դերին: Կարծում եմ, Սփյուռքն ունի շատ կարեւոր դեր, սակայն, այն պետք է իրականացնի իր աջակցությունը երկու ուղղություններով՝ դրանք են բարոյական աջակցությունն ու ներդրումները: Երբեմն, սակայն, Սփյուռքի որոշ ներկայացուցիչներ փորձում են դրսից ուղղորդել գործընթացները, ինչը, համոզված եմ, սխալ է: Առաջնորդող դերը բոլոր գործընթացներում պետք է ստանձնեն միայն Հայաստանի քաղաքացիները:[28]

Արտաքին հարաբերությունների ոլորտի կառույցներում սփյուռքի ներկայացուցիչների առավել լայն ներգրավման վերոհիշյալ փորձի անհաջողության կարևոր պատճառներից մեկն էլ, թերևս, բացահայտում է այս մեկնաբանությունը:

Մինչդեռ, ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում և սփյուռքում տեղի ունեցող արմատական տեղաշարժերը պահանջում են գնահատել տեղի ունեցող փոփոխությունները, դրանցով պայմանավորված նոր մարտահրավերներն ու հնարարվորությունները: Փորձեր արվել են

---

[27] **Koinova M.,** Diasporas and democratization in the post-communist world, *Communist and Post-Communist Studies,* 2009, 42, 41-64.

[28] Երբեմն Սփյուռքից փորձում են ուղղորդել Հայաստանի գործընթացները, ինչը, համոզված եմ, սխալ է. Տարոն Աճեմօղլու, https://www.amerikayidzayn.com/a/4433741.html , 17.08.2018

արդի հայկական սփյուռքը որպես մեկ ամբողջություն գնահատման[29], դրա առանձին համայնքների ուսումնասիրման[30] կամ համայնքների համեմատական վերլուծության[31] ուղղությամբ, սակայն դրանք, որպես կանոն, հաշվի չեն առել թե բնույթի, թե կառուցվածքի, թե ինստիտուտների լուրջ տրանսֆորմացիան։ Միայն Խ. Թոլոլյանի աշխատանքներից մեկն է անդրադառնում արդի հայկական սփյուռքի տրանսֆորմացիային, այն էլ այդ բազմաշերտ երևույթի միայն մեկ կողմին՝ գլոբալացման ազդեցությամբ վտարման ազգայնականությունից (exilic nationalism) անդրազգայնականությանն (transnationalism) անցման հարցերին[32]։ Մինչդեռ արդի հայկական սփյուռքի շատ խնդիրներ դեռևս ուսումնասիրման կարիք ունեն։

Հայկական սփյուռքի բնույթը

Գրեթե բոլորն, ովքեր զբաղվում են սփյուռքների ուսումնասիրությամբ, դասական կամ պատմական են համարում հայկական, հրեական և չինական, երբեմն էլ՝ հունական, աֆրիկյան ու իռլանդական սփյուռքները։[33] Այդ ընդհանուր մոտեցումը կիսելով, Ջ. Քլիֆորդը ունի նաև վերապահում. նա կարծում է, որ նոր, գլոբալ պայմաններում գոյատևման և հիբրիդացման համատեքստում հրեական, հունական և հայկական դեպքերը կարող են համարվել ոչ նորմատիվային նախատիպեր։[34]

---

[29] **Sheffer G.,** Diaspora politics: At home abroad. Cambridge, 2003; **Tölölyan Kh.,** Elites and Institutions in the Armenian Transnation. *Diaspora: A Journal of Transnational Studies*, 2000, 9 (1): 107–136.

[30] **Abramson S.,** Lebanese Armenian; A distinctive Community in the Armenian Diaspora and in Lebanese Society. *The Levantine Review,* 2013, 2 (2): 188–216; Cavoukian K., Ն շ վ . աշ խ.; **Oussatcheva M.,** Institutions in Diaspora: The Case of Armenian Community in Russia. University of Oxford. Transnational Communities Programme. 2001.

[31] **Ter-Matevosyan, V., et al.,** նշվ. աշխ.

[32] **Tölölyan Kh.,** 2000, նշվ. աշխ.

[33] **Sheffer G.,** 2003, նշվ. աշխ.; **Cohen R.,** Diasporas and the Nation-State: From Victims to Challengers Sources, *Ethnicity and International Relations,* 1996, **72**, 3, 507-520; **Sheffer G.,** 2013, նշվ. աշխ.

[34] **Clifford J.,** Diasporas, *Cultural Anthropology*, 1994, **9**, 3, 302-338.

Սովորաբար հայկական սփյուռքը դիտարկվում է որպես ընդհանուր հատկանիշներ ունեցող մեկ ամբողջական հանրություն, որը բաղկացած է տարբեր երկրներում հաստատված համայնքներից։ Մասնավորապես, սփյուռքներն ըստ կազմավորման նախադրյալների դիտարկելիս, Կոհենն առաջարկել է առանձնացնել դրանց հինգ տեսակ, որոնք նա անվանել է «իդեալական» տարբերակներ։ Ըստ այդմ՝ սփյուռքը լինում է

1. Զոհի կարգավիճակ ունեցող (հրեական, հայկական, պաղեստինյան, աֆրոամերիկյան),
2. Աշխատանքային (հնդկական),
3. Առևտրային (չինական),
4. Կայսերական,
5. Մշակութային։[35]

Այդուհանդերձ, միանգամայն արդարացիորեն Գ. Շեֆերը համարում է, որ գոյություն ունեցող սփյուռքյան համայնքները բաղկացած են մարդկանց խիստ հետերոգեն խմբերից։[36] Հայկական սփյուռքի պարագայում արդի զարգացումները վկայում են, որ սփյուռքների նշված հինգ տեսակներից զատ կարող է լինել ևս մեկը։ Պայմանականորեն այն կարելի է անվանել տրանսֆորմացվող, որի դեպքում զգալի տեղաշարժ է նկատվում հինգ «իդեալական» տարբերակներից որևէ մեկից դեպի մյուսը։ Եթե Կոհենի դասակարգումը հաշվի առներ հայկական սփյուռքի էվոլյուցիայի չորրորդ փուլը, ապա կարձանագրեր, որ ԽՍՀՄ փլուզումից հետո ի հայտ եկավ այդ սփյուռքի ամենաստվարաթիվ՝ ռուսաստանյան համայնքը[37], որի բնույթը ոչ թե զոհի կարգավիճակ ունի, այլ՝ աշխատանքային։ Հայկական սփյուռքի ձևավորման նախադրյալները եղել են և՛ քաղաքական (ստիպողաբար), և՛ սոցիալ-տնտեսական (ինքնակամ), սակայն ձևավորման տևական ժամանակահատված՝ մինչ ԽՍՀՄ փլուզումը, դրանց մեջ ակնհայտորեն գերիշխող են եղել բռնի տեղահանումները, բռնաճնշումները, հալածանքները, կոտորածները, ջարդերը, որոնք առավել մեծ չափերի են հասել պետականության տևական

[35] **Cohen R.,** 2008., նշվ. աշխ., 16-18.
[36] **Sheffer G.** 2006, *Diaspora Politics.* Cambridge: Cambridge University Press.
[37] **Tölölyan, Kh.,** 2000, նշվ. աշխ.

բացակայության պայմաններում: Այդ պատճառով հայկական սփյուռքն ավանդաբար համարվում է զոհի կարգավիճակ ունեցող սփյուռք:[38] Այդուհանդերձ, այդ գնահատականը լրամշակման կարիք ունի: Հայկական սփյուռքի էվոլյուցիայի նորագույն (չորրորդ) փուլում ձևավորվեցին սփյուռքի համալրման երկու հոսքեր՝ աշխատանքային (արտագաղթ հայրենիքից՝ ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված իրավիճակի հետևանքով) և զոհ-սփյուռք (Սումգայիթի, Բաքվի, Գյանջայի ջարդերի, էթնիկ զտումների, տեղահանությունների հետևանքով ձևավորված) բնույթն ունեցող:[39] Ընդ որում, առաջին հոսքը ազդեցիկ է իր ծավալներով ոչ միայն երկրորդի համեմատ, այլև, առանձին համայնքների կամ դրանց խմբերի դեպքում, բնույթի փոփոխության տեսակետից: Ըստ տարածաշրջանի խմբավորելիս՝ հաշվի առնելով նաև ըստ բնույթի տարբերությունները, կարելի է առանձնացնել հայկական սփյուռքի համայնքների հինգ խմբեր՝

- ռուսաստանյան,
- եվրոպական,
- հյուսիսամերիկյան,
- ֆրանսիական,
- մերձավորարևելյան:

Հայկական սփյուռքի էվոլյուցիայի չորրորդ փուլում արտագաղթը ուղղված էր դեպի Ռուսաստան, ԱՄՆ և եվրոպական երկրներ (բացառությամբ Ֆրանսիայի, ուր այդ ընթացքում մեկնած հայերի թիվը զգալիորեն ավելի փոքր է, քան մինչ այդ ձևավորված հայ համայնքի անդամներինը): Հայկական սփյուռքի ամենաստվար՝ Ռուսաստանի հայ համայնքի բնույթը գրեթե բացառապես աշխատանքային է, եվրոպական երկրների համայնքների մեջ ավելի մեծ թիվ են կազմում աշխատանքային նպատակով մեկնածները, սակայն այդ երկրներում համայնքները մեծաթիվ չեն: Միացյալ Նահանգների համայնքը Ռուսաստանի համայնքից հետո խոշորագույնն է և ամենազդեցիկը:

---

[38] **Cohen, R.,** 2008, նշվ. աշխ, p 48.

[39] **Թորոսյան Տ., Սարադյան Մ.,** Հայկական սփյուռքի հնարավորությունները և ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա, Երևան, Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն, 2017թ., էջ 165-170:

Թեև ԱՄՆ-ում չորրորդ փուլում հաստատված հայերի թիվը գրեթե հավասար է զոհի կարգավիճակով այստեղ հաստատվածների թվին, սակայն բացարձակ թվով ամերիկյան համայնքի աշխատանքային կարգավիճակ ունեցող հատվածը Ռուսաստանից հետո ամենամեծն է: Միացյալ Նահանգների հայ համայնքի այս երկու հատվածների տարբերությունները միայն դրանով չեն սահմանափակվում: Զգալիորեն տարբեր են նաև նրանց աշխարհայացքները, գերադասելի զբաղմունքները, սովորույթները և այլն[40], և պատահական չէ, որ նրանց միջև առկա են որոշ լարվածություններ: Ֆրանսիայի հայական համայնքում զգալիորեն գերակշռում են «հին» անդամները, որոնք հաստատվել են մինչ էվոլյուցիայի չորրորդ փուլը, իսկ հինգերորդ՝ մերձավորարևելյան խմբի համայնքները գրեթե բացառապես զոհի կարգավիճակ ունեցողներ են: Այսպիսով, ակնհայտ է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո հայկական սփյուռքի բնույթը կրել է որակական փոփոխություններ, սկսել է ***տրանսֆորմացվել***: Դժվար չէ նկատել, որ, թեև քննարկված օրինակը վերաբերում է կոնկրետ սփյուռքի՝ հայկականին, սակայն նման տրանսֆորմացիաներ՝ անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում, կարող են տեղի ունենալ այլ սփյուռքների դեպքում էլ, ընդ որում՝ նախադրյալների տարբեր տեսակների միջև: Հետևաբար, Ռ. Կոհենի առաջարկած՝ ըստ արտագաղթի նախադրյալի սփյուռքների դասակարգման հինգ տեսակներին վեցերորդի՝ տրանսֆորմացվողի, ավելացումը հիմնավոր է և հնարավորություն կտա ավելի ճշգրիտ գնահատել սփյուռքների բնույթը: Իսկ դա կօգնի հասկանալ սփյուռքների գործունեության արդյունավետության կամ անհաջողությունների պատճառները: Մասնավորապես, սփյուռքների բնույթների տարբերություններն ունեն առանցքային նշանակություն՝ սփյուռքների հատկանիշների տեսակետից: Միաժամանակ, սփյուռքների կամ դրանց բաղկացուցիչ համայնքների միջև բնույթների տարբերությունների բացահայտումը կարող է կարևոր գործոն լինել համեմատության տեսակետից համադրելի խմբեր ձևավորելու առումով: Մասնավորապես, հայկական սփյուռքի դեպքում, եթե համայնքների համեմատական վերլուծության կարիք կա՝ պարզելու համար մեկի հաջողությունների

[40] **Cavoukian K.,** նշվ. աշխ.

կամ դրանց բացակայության պատճառներն, ապա ճիշտ կլինի միմյանց հետ համեմատել նույն բնույթն ունեցող համայնքները: Դրանք, պայմանավորված արտագաղթի նախադրյալով և հյուրընկալող երկրի առանձնահատկություններով, ունեն միմյանցից էականորեն տարբերվող հատկանիշներ, պատկերացումներ ու մոտեցումներ հայրենի և հյուրընկալող երկրների հիմնախնդիրների, դրանց լուծման ուղիների, իրենց դերակատարության և այլ առանցքային հարցերի վերաբերյալ:

Եզրակացություն

Սփյուռքների ձևավորման ու կոնսոլիդացիայի օրինաչափությունների, Հայկական սփյուռքի էվոլյուցիայի, ինչպես նաև դրանց վրա վերջին տասնամյակների ընթացքում տեղի ունեցող համաշխարհային նշանակության գործընթացների՝ գլոբալացման, հետխորհրդային տրանսֆորմացիայի, նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացի ազդեցության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

1. ԽՍՀՄ և երկբևեռ աշխարհակարգի փլուզումից հետո գլոբալացման խորացման աննախադեպ արագության և հաղորդակցման միջոցների ու հնարավորությունների արմատական կատարելագործման արդյունքում որակապես փոխվել են գրեթե բոլոր հասարակական գործընթացների ու երևույթների թե արագությունը, թե բովանդակությունը: Մասնավորապես, էապես փոխվել է սփյուռքների աշխարհագրությունն ու կառուցվածքը, հայրենիքի ու ընդունող երկրի հետ փոխազդեցության ձևերն ու հնարավոր հետևանքները: Նոր իրողությունների լիարժեք ընկալման նպատակով պահանջվում է լրամշակել սփյուռքների ուսումնասիրման համար օգտագործվող տեսություններն ու մոտեցումները՝ դրանք ավելի ճշգրիտ և ավելի կոնցեպտուալացված դարձնելու նպատակով:
2. Երկբևեռ աշխարհակարգի փլուզումից հետո ծայր առած նոր աշխարհակարգի ձևավորման մրցակցության գրեթե երեք տասնամյակ շարունակվող գործընթացների ազդեցությունը լուրջ տրանսֆորմացիաների պատճառ է դարձել հայկական, ուկրաինական, լեհական և մի շարք այլ սփյուռքներում:

Գիտական հետաքրքրություն են ներկայացնում ինչպես այդ զարգացումների օրինաչափությունների, այնպես էլ առանձին սփյուռքների զարգացումներում նկատելի նոր երևույթների ու դրսևորումների ուսումնասիրությունները:

3. Նոր իրողությունների ազդեցության ներքո արմատական փոփոխություններ են տեղի ունենում նաև սփուռքների ավանդական դասակարգման շրջանակներում զոհի կարգավիճակ ունեցող հայկական սփյուռքում, որի ձևավորման ամենաազդեցիկ գործոնը մինչ այդ եղել է ցեղասպանությունը:
4. Հայկական սփյուռքի պատմական էվոլյուցիայի առաջին երեք փուլերի համար վերոհիշյալ բնորոշումներն անվիճելի են: ԽՍՀՄ փլուզումով սկիզբ առած չորրորդ փուլում տեղի է ունենում հայկական սփյուռքի կառուցվածքի, բնույթի և հատկանիշների էական տրանսֆորմացիա, քանի որ ի հայտ է եկել դրա համալրման մի նոր ազդեցիկ գործոն՝ արտագաղթը: Այդ նախադրյալի ազդեցությամբ հայկական սփյուռքը համալրող ստվար հատվածի բնույթն, ըստ նույն դասակարգման, ոչ թե զոհի կարգավիճակն է, այլ աշխատանքայինը:
5. Հայկական սփյուռքի դեպքը վկայում է, որ սփյուռքների էվոլյուցիայի ընթացքում ձևավորման և կոնսոլիդացիայի գործընթացներից զատ կարող է տեղի ունենալ սփյուռքի բնույթի տրանսֆորմացիա, մասնավորապես, դրա համալրման նախադրյալի փոփոխության դեպքում: Առաջարկվում է սփյուռքների բնույթը բնորոշող տեսությունը համալրել «տրանսֆորմացվող» կարգավիճակով, քանի որ դա հանգեցնում է սկզբունքային տեղաշարժերի: Դրա արդյունքում հայկական սփյուռքի դեպքում ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ի հայտ եկավ հայկական սփյուռքի մի նոր համայնք՝ Ռուսաստանի, որը ոչ միայն խոշորագույնն է հայկական սփյուռքում, այլև ունի առանցքային տարբերություններ ավանդական սփյուռքի համեմատ և զգալի ազդեցություն հայրենիքում:
6. ԽՍՀՄ փլուզման հետևանքով ձևավորված արտագաղթի երկու ամենաստվար հոսքերից մյուսն ուղղվեց Միացյալ Նահանգներ: Դրա հետևանքով արձանագրվել են լուրջ փոփոխություններ և

համայնքն արդեն բաղկացած է միմյանցից զգալիորեն տարբերվող երկու հատվածներից։ Եթե մինչ այդ գործընթացները հայկական սփյուռքն, ըստ կազմավորման նախադրյալի, գրեթե միասեռ էր և ուներ զոհի կարգավիճակ, ապա տրանսֆորմացիայի արդյունքում այն կարելի է բաժանել հինգ խումբ համայնքների՝ Ռուսաստանի (գրեթե միայն աշխատանքային սփյուռք), Եվրոպայի (աշխատանքային սփյուռքի բացահայտ գերակշռություն), Միացյալ Նահանգների (գրեթե հավասարակշռություն զոհի կարգավիճակ ունեցող և աշխատանքային սփյուռքների միջև), Ֆրանսիայի (զոհի կարգավիճակի բացահայտ գերակշռություն), Մերձավոր Արևելքի (միայն զոհի կարգավիճակ)։ Այդ խմբերն ունեն միմյանցից էականորեն տարբերվող պատկերացումներ ու մոտեցումներ հայրենիքի և հյուրընկալող երկրի, այլ առանցքային հարցերի վերաբերյալ։

7. Արդի հայկական սփյուռքի երկու գլխավոր հատվածների հատկանիշների տարբերությունները պայմանավորված են հոսքերի ձևավորման նախադրյալներով՝ այդ հոսքերը ձևավորող մարդկանց կենսափորձով, արժեհամակարգով և անձնային ու խմբային հատկանիշներ ձևավորող այլ գործոններով։ «Հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» արդյունավետ հարաբերությունների կառուցման դժվարությունները հայկական սփյուռքի դեպքում կապված են ոչ միայն տրանսֆորմացիայի փուլով պայմանավորված նորահայտ խնդիրներով, այլ նաև այն հանգամանքով, որ սփյուռքյան համայնքները տարածված են մեծ թվով երկրներում և առանձին խմբեր պահանջում են միանգամայն առանձնահատուկ մոտեցումներ՝ պայմանավորված ընդունող երկրների վարչակարգերի տեսակներով, տիտղոսային ժողովուրդների դավանանքով, մշակույթով և այլն։

8. Արդի հայկական սփյուռքի՝ միմյանցից էապես տարբերվող երկու ստվար հատվածների առկայությունը՝ տարաբնույթ նախադրյալների հետևանքով ձևավորված լինելու պատճառով, խնդիրներ է առաջացնում ինչպես սփյուռքում, այնպես էլ հայրենիքում։ Առաջին դեպքում նոր և լուրջ դժվարություններ

են առաջանում սփյուռքի կոնսոլիդացիայի և ինստիտուտների գործունեության արդյունավետության ապահովման տեսակետից։ Երկրորդ դեպքում դա լուրջ խոչընդոտ է սփյուռքի ներուժը հայրենիքում հետխորհրդային ազգային ինքնության ձևավորման, ինչպես նաև հետխորհրդային պայմաններում հայրենի պետության կայացման խնդիրների լուծման նպատակով ներգրավելու համար։

Peculiarities of transforming diasporas: the case of the Armenian Diaspora

TIGRAN TOROSYAN
Yerevan Brusov State University of Languages and Social Sciences
Center of Perspective Researches and Initiatives

ARAX VARDANYAN
Center of Perspective Researches and Initiatives

The article presents the methodology of studying the changes in diasporas evolved from the former post-Soviet space after the collapse of the Soviet Union under a sharp intensification of globalization, as well as the research results based on the proposed methodology. The article draws upon the case of the Armenian Diaspora, which is considered as classical or historical. It argues that during the evolution diasporas, if the prerequisite for their replenishment is changing, their nature and characteristics are also changing. Even significant differences arise between the communities forming the same diaspora. Thus, the need arises to make comparative analysis of the communities forming a particular diaspora. The article presents a four-stage model of periodization of the Armenian Diaspora. It further proposes to add the transforming type of diaspora to the classification suggested by Cohen. This will allow for more accurate description of the developments taking place in diasporas for almost three decades, which are the result of post-Soviet transformation, as well as the collapse of the old world order and formation of a new one.